

## **Սյունիքի սահմանամերձ 5 համայնքների աշակերտների համար անցկացվել է էկոկրթական բաց դաս**

«ՀՀ բնապահպանության նախարարության նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության աջակցությամբ ՀՀ Սյունիքի մարզի Շիկահող, Ծավ, Ճակատեն, Սրաշեն և Ներքին Հանդ համայնքների 82 աշակերտների համար կազմակերպվել է բնապահպանական թեմաներով մեկօրյա բաց դաս, որին մասնակցում էր ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը, մարզի կրթության ոլորտի պատասխանատուներ, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Դասի ընթացքում կարևորվեց բնապահպանական գիտելիքներով զինված և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար սերնդի առաքելությունը Սյունիքի հարուստ բնաշխարհը պահպանելու գործում:

ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության ներկայացուցիչ Անահիտ Սիմոնյանը նույնպես կարևորել է դասի ժամանակ գտնվող դպրոցականների առաքելությունը հայրենի ծննդավայրի պահպանության գործում, ինչի հիմքն է սերը դեպի բնությունը:

Օզոնի ազգային կենտրոնի ղեկավար Լիանա Ղահրամանյանը մատուցել է օզոնի շերտի պահպանության, արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների վտանգավորության և դրանցից պաշտպանվելու մասին տեսական և դիդակտիկ նյութեր: Ստացած գիտելիքներն դպրոցականներն ամրապնդել են գործնական աշխատանքով՝ բնության տեսարաններ նկարներով:

«Աջակցություն բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացմանը ծրագրի» ղեկավար Կարեն Ճենտերեջյանը շրջակա միջավայրի պահպանության խնդիրները լուսաբանելու հետ մեկտեղ դպրոցականներին է ներկայացրել իրենց գյուղերի հարակից տարածքներում գտնվող «Շիկահող», «Սոսու պուրակ» և «Խուստուփ» բնության հատուկ պահպանվող տարածքների հարուստ կենդանական և բուսական աշխարհի մասին մատչելի տեղեկություններ:

Հինգ համայնքների դպրոցների բոլոր աշակերտները ստացել են նվերներ՝ գրենական պիտույքներով լի դպրոցական ուսապարկեր և բնապահպանական տարբեր թեմաներով ուսուցանող գրքույկներ, իսկ դպրոցներին հանձնվել է հեծանիվներ, հատակի մեծ չափերի թեմատիկ խաղեր:

Ծավ համայնքի դպրոցի տնօրեն Յուրա Մարտիրոսյանը մյուս դպրոցների տնօրենների և համայնքի բնակիչների անունից շնորհակալություն հայտնելով կազմակերպած միջոցառումների համար՝ հավաստիացրել է, որ իրենց դպրոցներում բնապահպանական կրթությունը պատշաճ մակարդակի վրա է գտնվում, իսկ անցկացված բաց դասը դպրոցականներին ավելի հոգատար կդարձնի իրենց շրջապատող հարուստ բնության հանդեպ:

Դպրոցականներն իրենց հետաքրքրող հարցերն են ուղղել դասընթացավարներին, որից հետո միջոցառման ներկա հյուրերը և ուսուցիչները դիտել և խորախուսման են ներկայացրել դասընթացի ժամանակ դպրոցականների նկարած բնապատկերները: